ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025թ.

Ներածություն

Ղեկավարվելով «Անձնական տվյալների պաշտպանության» մասին ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 14-րդ կետով և առաջնորդվելով կառույցի որդեգրած թափանցիկության ու հաշվետվողականության քաղաքականությամբ՝ ներկայացնում է Անձնական տվյալների պաշտպանության գործակալության (այսուհետ՝ Գործակալություն) հրապարակային հաշվետվությունը, որում ներկայացված է 2025 թվականի իրականացված աշխատանքները և անձնական տվյալների պաշտպանության բնագավառում առկա իրավիճակը:

Իրավիճակի գնահատում

2025 թվականը հոբելյանական էր Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի՝ Անձնական տվյալների պաշտպանության գործակալության համար, քանի որ լրանում էր Գործակալության ստեղծման տասը տարին: 2015 թվականին ընդունված «Անձնական տվյալների պաշտպանության» մասին ՀՀ օրենքը մեկնարկային այն կետն էր, որից Հայաստանի Հանրապետությունում սկիզբ առավ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի զարգացումը:

Տասը տարիների աշխատանքի արդյունքում կարող ենք արձանագրել, որ Հայաստանում անձնական տվյալների պաշտպանության իրավունքն անցել է կայացման իր ուղին և ներկայում գտնվում է ինտենսիվ զարգացման փուլում: Անձնական տվյալների պաշտպանության գործակալության հիմնական առաքելություններից շարունակել է մնալ այս իրավունքի վերաբերյալ իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումները, ուսուցումները, ներպետական օրենսդրության մոտարկումը անձնական տվյալների պաշտպանության միջազգային չափանիշներին և իհարկե քաղաքացիների դիմում–բողոքներին պատշաճ արձագանքը ու դրանց ուղղությամբ վարչարարության իրականացումը:

Հաշվետու տարին նշանավորվել է պետության կողմից մատուցվող ծառայությունների թվայնացման մեծ թափով, ինչն ինքնին որոշակի մարտահրավերներ է պարունակում անձնական տվյալների պաշտպանության տեսանկյունից: Այս առումով Գործակալությունն իր լիազորությունների շրջանում պարբերաբար արձագանքել է հանրային տիրույթում բարձրացված խնդիրներին ու հարցադրումներին, այդ թվում՝ իրականացնելով կանխարգելիչ միջոցառումներ՝ համապատասխան ուսուցումների տեսքով:

Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի համար որպես ոլորտի հիմնական մարտահրավեր, շարունակում է մնալ լիազոր մարմնի անկախության և ռեսուրսների (մարդկային և տեխնիկական) սակավության խնդիրը, ինչը հանդես է գալիս որպես հիմնական խոչընդոտ Օրենքով սահմանված լիազորությունների ողջ ծավալով իրացման համար:

2025 թվականի հիմնական ուղղությունները

Խորհրդատվություններ

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 15-րդ մասը սահմանում է Գործակալության լիազորությունը՝ կատարել հետազոտություններ և մշակողների դիմումների կամ լուսաբանումների հիման վրա տալիս է տվյալներ մշակելու վերաբերյալ խորհրդատվություն կամ տեղեկացնում է անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ լավագույն փորձի մասին: Միաժամանակ, հարկ է արձանագրել, որ հասարակության լայն շրջանակում անձնական տվյալների պաշտպանության իրավունքի վերաբերյալ իրազեկվածությունը դեռևս մնում է Գործակալության գերխնդիրներից:

Ելնելով վերոգրյալից՝ Գործակալությունը 2025 թվականին ֆիզիկական անձանց, պետական մարմիններին և կազմակերպություններին տրամադրել է անձնական տվյալների մշակման վերաբերյալ շուրջ 570 խորհրդատվություն, որից 525 խորհրդատվություն (բանավոր կամ առցանց), 45-ը գրավոր՝ հիմնականում պետական մարմիններին:



Վարչական վարույթներ

Գործակալությունն օրենքով նախատեսված իր գործառույթների շրջանակներում 2025 թվականին իրականացրել է 64 գործերով անձնական տվյալների մշակման իրավաչափության քննություն:

- Հարուցվել է թվով **26 վարչական վարույթ:**
- **38 դիմումով** իրականացվել է վարչարարություն:



Շուրջ 200 գրավոր կարծիք անձնական տվյալների մշակում նախատեսող իրավական ակտերի, այդ թվում՝ միջազգային պայմանագրերի նախագծերի վերաբերյալ:



Հանրային իրազեկում և ուսուցումներ

- Գործակալության պաշտոնական էջերում (այդ թվում՝ սոցիալական ցանցում և PDPA.am կայքում) հրապարակվել է թվով **62 տեղեկատվական նյութ**:
- Իրականացվել են **ուսուցումներ շուրջ 500 անձի** մասնակցությամբ, այդ թվում՝ **Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների շուրջ 210 ուսուցիչների,** ՀՀ արդարադատության նախարարության «Իրավունքի ամառային դպրոց» և «Դարձիր կամավոր» ծրագրերի շուրջ **150 մասնակցի,** «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող՝ քրեակատարողական ծառայողների վերապատրաստման և մի շարք բուհերի ուսանողների հետ հանդիպումների շրջանակում:

- Անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման և անձնական տվյալների խախտումների կանխարգելմանն ուղղված աշխատանքների շրջանակում մշակվել է 2 տեսահոլովակ:

[Պահպանեք ձեր անձնական տվյալները. մի՛ վստահեք անծանոթ անձանց և չստուգված աղբյուրների]

[Ո՞ր դեպքերում է անձնական տվյալների մշակումը համարվում օրինական]

- UNICEF կազմակերպության աջակցությամբ Գործակալության կողմից մշակվել և հրապարակվել է **«Անձնական տվյալների պաշտպանության իրավակարգավորումները ուսումնական հաստատություններում» ձեռնարկը:**

- Անձնական տվյալների պաշտպանության գործակալության կողմից մշակվել և հրապարակվել է «**Թիրախում երեխաներն են. Առցանց խաղերի միջոցով տարածվող սպամ և ֆիշինգ. ինչպես պաշտպանվել**» գործնական ձեռնարկը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Թիրախում երեխաներն են
Առցանց խաղերի միջոցով տարածվող
սպամ և ֆիշինգ. ինչպես պաշտպանվել